

ԻՆՏԵՐՆԵՏԻ ԼՐԱՅՈՍՔԻՑ

ՀԱՆԻԼ ԲԵՐԿՏԱՅ. «ՏԵՂԱՅԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈ՛Ւ
ԷԹՆԻԿԱԿԱՆ ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒՄ ԷՐ»*

Պրոֆ. Բերկտայ. «Տեղահանության հրահանգը վերաբերում էր Կայսրության բոլոր հայ հպատակներին: 1915 թվականը չի սահմանակվում միայն Արևելքով: Եթե նույնիսկ չլինի «սպանելու» գործոնը, այսքանն անգամ մտնում է «ցեղասպանության» սահմանման մեջ»:

Դերյա Մազակի հարցազրույցը Հալիլ Բերկտայի հետ

- Իբրև պատմաբան ինչպե՞ս եք գնահատում Օսմանյան վերջին շրջանի՝ 1915թ. դեպքերը: Ինչպե՞ս էր երևում Օսմանյան հոգեբանությունը Ի-ին համաշխարհային պատերազմի նախօրեյին:

[Օսմանյան կայսրությունը] բավականին անհանգստացած էր արտաքին աշխարհի հանդեպ: Ձևավորվեց իրեն հալածված և իբրև զոհ նկատող պայթուցավտանգ մի թուրք ազգայնականություն: 1912-13թթ. Բալկանյան պատերազմներն այս տեսանկյունից հանդիսացան շրջադարձային: Երբ հունական բանակն առաջ էր շարժվում, Ստամբուլ Բերայում փոքրամասնությունները շնորհավորում էին հաղթանակը: Առաջին համաշխարհային պատերազմի բոթը դեռ չէր պայթել, երբ հունաստանցիների և հույների հանդեպ սկսվեց էթնիկական մաքրագործում: Սրա մասին է պատմում Օսմանյան ազգային ժողովի խոսնակ Հալիլ Մենքեշեն իր հուշերում:

- Բալկանյան պատերազմում միջոցներ նախաձեռնվե՞լ է օսմանցիներին դավաճանողների դեմ...

Թրակիայի հույների հանդեպ [կատարվել է] մի մաքրագործում: Teşkilat-ı Mahsusa - հատուկ կազմակերպու-

* Սաբանջիի համալսարանի պրոֆեսոր Հալիլ Բերկտայի հետ հարցազրույցը վերցվել է 2005թ. մարտի 3-ի <http://www.milliyet.com.tr/2005/03/07/siyaset/asiy.html> 07/03/2005 tarixli gazete թուրքական ինտերնետային լրատվության էջից: Հալիլ Բերկտայ. ծնվել է 1947թ.: Բալկալավրի և հետբալկալավրյան կրթությունը վերջացրել է 1968թ. Եյլ համալսարանում: Պատմության գծով թեկնածուականը պաշտպանել է Բիրմինգհամ համալսարանում: Դասախոսել է՝ Անկարայի, ՕԴՏՈՒ-ի (Միջին Արևելյան Տեխնիկական Համալսարան) և Բողազիչի համալսարաններում: Դասախոս է Սաբանջիի համալսարանի Արվեստի և Մոցիալական Գիտությունների ֆակուլտետում:

բյուռ միջոցով հույներին անհանգստացնելու մասին հրահանգի շրջանակներում սկսվում է գործողությունները: Հալիլ Մեմթեշին գրում է թե 100 հազարի մոտ հույներ առանց քթերն անգամ արյունահոսելու տեղափոխվել են Հունաստան: Նման բաներ կատարվում էր Չմյուռնիայում: Կիսաբաց, կիսաքաջուն քաղաքականությամբ կատարվում էր էթնիկական մաքրագործում: Այս դեպքերը հայկական կոտորածների անգնն մախափործերն են: Չեմ ասում, որ այն ժամանակ հայկական տեղահանությունը ծրագրավորված էր, բայց վերջին հաշվով կար նման փորձառություն:

1912թ. Ստամբուլի անկման վտանգներ էր հայտնվել: Էնվեր փաշան ստիպված էր Ռազմական մախարարությանն Անատոլիա տեղափոխելու մասին հրահանգ տալ, և Անատոլիան հարկավոր էր մաքրել հնարավոր դավաճան տարրերից ու անվտանգ դարձնել: Արտագաղթի որոշումը կայացվել էր այսպիսի հոգեվիճակում:

- *Հայկական արտագաղթի հրահանգը ո՞վ է արձակել, Էնվեր փաշա՞ն:*

- Ըստ իս Թալեաթը շատ ավելի կարևոր մարդ է, քան Էնվերը: Իթթիհատականների հիմնական ուղեղն էր: Նապոլեոնի շրջանում կար գաղտնի ոստիկանություն պետ՝ Ֆուշեն, Թալեաթը մի քիչ նման էր նրան: Ամեն ինչին նայում էր որպես «պետական իմաստություն»: Թալեաթը համոզում է Էնվերին և Ջեմալին ընդդեմ հայերի: Հայերը ևս մեծ սխալ են անում իրենց հաշվարկներում: Ասում են «ուշադրություն չդարձնենք, սրանք հերյուրանք են»:

Արտագաղթի նպատակը կայսրության բոլոր հայ հպատակների հետապնդումն էր, միայն այն պատճառով, որ նրանք հայ էին: Այսինքն արտագաղթի օրենքը չէր ասում՝ միայն դատարկելու ենք Արևելյան Անատոլիան: Ո՛չ: 1915թ. սահմանափակված չէր Արևելյան Անատոլիայի ռազմական շրջաններով: Արտագաղթի օրենքը ինքնուրույնաբար էթնիկական մաքրագործում էր:

- *Ինչպե՞ս էր իրագործվում օրենքը:*

- Պետության օրինական մեխանիզմի միջոցով, ներքին գործերից ուղղակիորեն ուղարկված հրահանգների միջոցով, ուր ասվում է. «Ձեր շրջանի հայերին անհապաղ հավաքելու եք», «Շարասյուններով դեպի հարավ-արևելք, այնտեղից ուղարկելու եք Սիրիայի, Իրաքի որոշ քաղաքներ, ուր բնակեցվելու են»: Օրինակները չեն սահմանափակվում Արևելյան նահանգներով: Եղել են տեղահանումներ Իզմիլից (Նիկիա), Իզմիթից, Չորլուից: Աքսորվել են հայ լիներու պատճառով: Եթե մույնիսկ չլիներ «սպանության» գործոնը, այսքանն անգամ բավական է որպեսզի այն համապատասխաներ «ցեղասպանություն» սահմանումին, էթնիկական խումբը հավաքաբար անհետացնել, արմատախիլ անելու կատեգորիային: Չմտածենք, որ օսմանյան բյուրոկրատիան անպայմանորեն իթթիհատական «սոցիալ դարվիճիզմին» էր հետևում: Դիմադրողներ եղել են:

Այստեղ հանգում ենք գործի հիմնական սև կետին: Այսօր ավելի պարզ հասկանում ենք, որ պաշտոնական հրահանգներից բացի եղել են երկրորդական և գաղտնի հրահանգներ:

- *Ո՞վ էր արձակում գաղտնի հրահանգները: Թեշկիլաթ Մահսուսա՞ն (Հատուկ կազմակերպություն):*

- ... Իթթիհատականներն ունեին գաղտնի զինյալ թև, ինչպիսիք են՝ Յաքուպ Ջեմիլը, Բահատտին Շաքիրը, դոկտոր՝ Ռեշիթը և այլն... Կա

Թեշկիլաթ Մահսուսան, որի մեջ տեղ են գրավում այս մարդիկ: Քեմալ Թահիրը «Զուրտ Քանունը» (Քայլի օրենք) վեպում պատմում է այն մասին, որ Թեշքիլաթ Մահսուսայի ֆիդայիները քիչ էր մնացել սպանելին «Մառք փաշային»: Մուստաֆա Քեմալին:

- «Մյուսի» պատմությունը գրելու հարցում համարյա միշտ օգտագործվում են միայն թուրքական աղբյուրները:

- Պաշտոնական բացատրությունն այսպիսինն է. «Դժբախտաբար մահացել են սովից»: Հայերի հետ ի՞նչ պատերազմ: Առաջին կոտորածների համար կար հրահանգ: Տեղական բնակչության միջի ամենավատ տարրերը ստանում են այն հրահանգը, թե այլևս հայերի «ոլոսն ազատ է»: Սկսվում է կոտորածների երկրորդ փուլը: Ուզում եմ ձեզ ներկայացնել սրա փաստը: Այո, կարդում եմ Թալաթ փաշայի Տիգրանակերտի կուսակալին (վալի) ուղարկած 1915 թվակիր հուլիսի 12-ի (հունիս 29) հեռագիրը: Թալեաթը տեղեկացնում է թե իրենք իրազեկվել են, որ շրջանի մուսուլման ժողովուրդը հավաքաբար կկոտորի հայերին, Տիգրանակերտի տեղահանված հայերից և մյուս քրիստոնյա ժողովուրդից ոմանք զիշերը քաղաքից դուրս են բերվում և սպանվում են: Թալեաթը զգուշացնում է Տիգրանակերտի կուսակալին, որպեսզի «այն միջոցները, որ կիրառվում են հայերի հանդեպ երբևէ չօգտագործեն մյուս քրիստոնյաների դեմ»: Թալաթը ի՞նչ է ուզում ասել «միջոցներ» ասելիս, ա՞րքայի, թե՞ կոտորած: Չի ասում:

- Հնարավո՞ր է հեռագիրն այլ կերպ կարդալ:

- Ասենք, որ Թալեաթը ցանկանում է բոլոր կոտորածները կանխել և հայերի աքսորն առանց արյունահեղության շարունակել: [Այդ դեպքում մա] ի՞նչ պիտի ասեր. իսկույն կանխել ամեն տեսակի կոտորածները: Թալեաթը չի ասում սա: Բայց ոլորուն ձևով Տիգրանակերտի կուսակալին ուզում է ասել. «Չեք մի տվեք մյուս քրիստոնյաներին, շարունակեք կատարել (գործողությունները) հայերի (հետ) ձեր իմացած ճանապարհով»: Կա գաղտնի հրահանգներ: Ասում են, որ պետությունը հայ գաղթականներին պահակախմբեր տրամադրեց: Չինվորական պաշտպանությունով եթե եղել է հարձակում, այս բախումների մասին տվյալներն ո՞ր են: Պաշտոնական թեզիս թող ինձ ցույց տան՝ Յուսուֆ Հալաճօղլուն (Թուրք Պատմության Ընկերության նախագահ (ԹՊԸ)), Հիքմեթ Օզդեմիրը (ԹՊԸ Հայական Հետազոտությունների տնօրեն) թո՛ղ ցույց տան սպայական զեկույցները:

- Հանրապետության հիմնադրումից հետո ի՞նչպես փակվեց հայկան դռայեն:

- Բոլորն էլ հասկանում էին դեպքի ահավորությունը: Էնվերի, Թալաթի և Ջեմալի կառավարությունները 1915-16թթ. համարվում էին «ազնական հանցագործ» Անտանտ պետությունների կողմից: Միսաք Մլիլին [Ազգային համաձայնագիր՝ ընդունված 1920թ. հունվարին օսմանյան խորհրդարանի կողմից Մուստաֆա Քեմալի կողմնակիցների շնորհիվ - Ծ.Թ.] ունի հավելում՝ Պատժելու համաձայնագիր... Հայական կոտորածների պատասխանատուներին ուղղված: Քեմալական լիդերությունը ճանապարհի դուրս գալու սկզբում նման խոստումներ է տալիս: Մուստաֆա Քեմալն Իթթիհատ և Թերաքքիի կազմում ընդհմախոս էր և ընթոստ: Հայտնի էր իր և Էնվերի միջև տարաձայնությունը: Հավանական է, ինչպես գրում է Քեմալ Թահիրը, որ մտադրություն կար Մուստաֆա Քեմալին ոչնչացնել:

Հակառակ սրա Իթքիահատ Թերաքքին Անատոլիայի Ազգային պայքարը ղեկավարելու հարցում որոշում կայացրեց՝ ղեկավարությունը հանձնել Մուստաֆա Քեմալին: Եթե անգամ նրան ընկալում էին «խնամատար», ինչո՞ւ ուրեմն այդպիսի որոշում կայացրեց: Անհերքելի էին Մուստաֆա Քեմալի շնորհները. պատերազմի հերոս էր, ուներ հիանալի խարիզմա, վայելում էր հարգանք: Նրա ձեռքերը մաքուր էին, չէր խառնվել Հայկան հարցին: Մուստաֆա Քեմալի՝ Անատոլիա ուղարկվելու, Ազգային պայքարի ղեկավարությունը ստանձնելու և Իթքիահատ Թերաքքիի գաղտնի կառավարման այստեղ համաձայնության գալու հարցում Հայկական հարցը և ուներ անտողակի ազդեցություն. սա ես ասում եմ, որպես պատմաբան: Մտահոգություն կար, որ Ազգային պայքարը 1915թ. հայկական աղետի ստվերի տակ չմնա: Մուստաֆա Քեմալը չունի ոչ մի հայատարարություն, ուր պաշտպանվում են հայերի նկատմամբ բռնությունները:

- 1915թ. հայկական դեպքերի ժամանակ քրդերին ուղղված նման հրահանգներ ընդունվել են: Ինչո՞ւ էին միայն հայերն աքսորվում:

- Այն ժամանակ դեռ քուրդ ազգայնականություն չկար: Հայերն Անատոլիայի միակ և մեծ քրիստոնյա բնակչությունն էր: Կեսն ապրում էր Արևելյան Անատոլիայում: Հայկական ազգայնականության դաշնակցությունը կարևոր հարց էր: Ինչպես անցյալում օսմանցիք բուլղարների դեմ օգտագործեցին պոմաքներին, նույն կերպ հայկական շարժման դեմ՝ քրդերին: Հատկանշական է «համիդիեյի» ռազմականացված խմբերի փաստը: Մրան հետևում են քրդական ցեղախմբերը: Թուրք ազգայնականների ասույթներում ժամանակ առ ժամանակ ասվում է. «մենք չսպանեցինք, քրդերը սպանեցին»: Քրդերն օսմանցիների հրամանով էին ղեկավարվում:

- Մահացած հայերի քանակի մասին ձեր ենթադրությունները:

- Հարգելի դիվանագետ. Զյամուրան Կյուրումի գրած կիսաշտոնական «Հայկական դոսյե» գրքում ասվում է, թե 1915-16թթ. դժբախտաբար մահացել են 400-450 հազար հայ: Աշխարհի առաջնակարգ հանրագիտարանային աղբյուրներում ասվում է՝ նվազագույնը 600 հազար հոգու մասին: Ազգերի Լիգան ուներ Նանսենյան հանձնաժողով (գաղթականների հանձնաժողով). այնտեղ խոսվում է 800 հազար զոհերի մասին: Հայ սիյուռքի հետազոտողներն ասում են 1 մլն. զոհ:

- Հայերը ոչ մի մեղք չունեն:

- Հայերը ունեյին երկու ազգայնական կազմակերպություն՝ Դաշնակցություն և Հնչակ: Դաշնակցությունն ավելի աջակողմյան էր: Արևելյան շրջաններում [նրանք] ցարական Ռուսաստանի հովանավորությամբ շարժման մեջ են մտնում օսմանցիների դեմ: Թուրք պաշտոնական շրջանակները վերին աստիճանի չափազանցնելով աշխատեցին պնդել, որ հայերը հայ ազգայնական կոմիտեների միջոցով սպանել են 500 հազար թուրքերի, էթնիկական մաքրագտման պատերազմ մղելու ընթացքում իրենց շրջանների թուրք մուսուլման գյուղերում: Այսպիսի բան չկա:

- Այսօրվա համար ի՞նչ կարելի է ասել:

- Թուրքիայի Հանրապետությունը չի կարող դիտվել 1915թ. դեպքերի պատասխանատու: Վարչապետը կամ արտգործնախարարը կարող են ասել սա: Բոլոր ազգ-պետությունների ձևավորման ընթացքում կա վշտալի և մութ էջեր: Իթքիահատ Թերաքքիի կառավարությունը օսմանյան ժողովրդի մի հատվածի դեմ ընդունել է աքսորի որոշում, և այս գործադրու-

թյան արդյունքում մահացել են մի քանի հարյուր հազար մարդ: Այս պատմական դեպքերի կապակցությամբ ցավակցում ենք: Բայց սրանից ավելին միայն պատմաբանների ազատ երկխոսության և սերունդների՝ այս իրողության հետ հաշտվելու արգասիքը կարող է լինել:

Ես համոզված եմ, որ եթե [հարցը] ՄԱԿ տանենք, պարզ կդառնա, թե «ցեղասպանություն չէ» խոսքն ամբողջությամբ հերյուրանք է:

Թարգմանությունը՝ Կայծակ Մարմարյանի